

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/7

7 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Կարինե Միսակյանի 23.03.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 908 որոշման դեմ:

Քաղաքացի Կարինե Միսակյանի գանգատում բերված փաստարկները.

Ա.թ. մարտ ամսին փոստի միջոցով ՀՀ ֆինանսների նախարարության Արմավիրի ՏՀՏ-ից ստացվել է Արմավիրի ՏՀՏ-ի պետի 17.02.2015 թ-ի թիվ 908 որոշումը՝ Ա/Ձ Կարինե Միսակյանի (ՀՎՀՀ 49534894) վերաբերյալ վարչական վարույթի արդյունքում գումար գանձելու մասին: Նշված որոշման ընդունման հիմքում դրված է այն փաստը, որ Ա/Ձ Կարինե Միսակյանը 2009-2010 թ.թ. չի կատարել պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունների վճարումը 54000 դրամի չափով, որի հետևանքով հաշվարկվել է տույժ 29565 դրամի չափով:

Վերոհիշյալ որոշմամբ գանձման առաջադրված գումարը կազմում է 83565 դրամ:

Կարինե Միսակյանը (այսուհետ նաև Գանգատաբեր) հայտնում է, որ նշված որոշման բովանդակությունը անհասկանալի է, քանի նա երբեք գրանցված չի եղել որպես անհատ ձեռնարկատեր և չունի հարկ վճարողի հաշվառման համար, հետևաբար 2009-2010 թ.թ. չէր կարող առաջանալ հարկային պարտավորություններ: Խնդիրը պարզելու համար գանգատաբերը այցելել է ՏՀՏ իրավաբանական բաժին, որտեղ առձեռն հանձնել են ՏՀՏ-ի պետի 09.03.2015 թ-ի թիվ 908 որոշման հավելվածը և Արմավիրի ՏՀՏ-ի 09.03.2006 թ-ի թիվ 2302886 ակտը: Նշված հավելվածն իր բովանդակությամբ այլ բան է, չի համապատասխանում թիվ 908 որոշմանը և անհասկանալի է, թե ինչպես կարող էր Արմավիրի ՏՀՏ-ի կողմից կազմված լինել ակտ առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ, եթե թիվ 908 որոշման հավելվածի համաձայն, առկա է անհատ ձեռներեցի կարգավիճակ:

Գանգատաբերը տեղեկացնում է, որ իրոք 2006 թ-ին փորձել է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ և մեր հայրական տան բակում տեղադրված տաղավարում փորձնական կազմակերպել է մանրածախ առևտուր: Մեկ-երկու շաբաթ անց հարկային տեսչության աշխատակիցներն արձանագրել են առանց պետական գրանցման աշխատելու փաստը, կազմել են ակտ և առաջարկել են գրանցվել պետական ռեգիստրում: Քանի որ գործունեության արդյունքները հուսադրող չէին, ուստի գանգատաբերը որոշել է չջարունակել գործունեությունը և չի գրանցվել պետական ռեգիստրում: Նշված ակտի արդյունքներով առաջադրված գումարը 10-օրյա ժամկետում վճարել է (թերևս վճարման անդորրագիրը չի պահպանվել) և միևնույն օրս հարկային պարտավորություններ ունենալու հարցով հարկային տեսչությունից չեն անհանգստացրել:

Գանգատաբերը մանրամասն ուսումնասիրել է իրեն տրամադրված ակտը և կարծում է, որ այն թերի է և չի կազմվել օրենքով սահմանված կարգով, սակայն 2006

թ-ին այդ առումով չի առարկել և տեսուչների խորհրդով վճարել է առաջադրված գումարը:

Այժմ հարկային տեսչությունում պնդում են, որ իբև 2006 թ-ի ակտով առաջադրված գումարը մասնակի է վճարվել, որի հետ գանգատաբերը համամիտ չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 908 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Կարինե Միսակյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 10.02.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 83.565 դրամ, որից ապառք 54.000 դրամ, տույժ 29.565 դրամ: Պարտավորությունն առաջացել է 2009-2010 թ.թ. ընթացքում՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված սոցիալական վճարների գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի կողմից 17.02.2015 թ-ին ընդունվել է թիվ 908 որոշումը (այսուհետ նաև Որոշում)՝ Ա/Ձ Կարինե Միսակյանից 83.565 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Այնուհետև, ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի կողմից 09.03.2015 թ-ին ընդունվել է Որոշման հավելված, որով ճշգրտվել են Որոշման մեջ տեղ գտած անճշտությունները:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 908 որոշումը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածի համաձայն. «1. Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.»:

Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում»:

Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է

նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:»:

Քննարկվող դեպքում Որոշումը կազմվել է վերոգրյալ իրավանորմերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, Որոշման մեջ նշված է, որ 10.02.2015 թ-ի դրությամբ Ա/Ձ Կարինե Միսակյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 83.565 դրամ, որն առաջացել է 2009-2010 թ.թ. ընթացքում՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված սուցիալական վճարների գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով: Սակայն իրականում Կարինե Միսակյանը երբևէ անհատ ձեռներեց չի եղել, իսկ նրա չկատարված պարտավորություններն առաջացել են ոչ թե 2009-2010 թ.թ. ընթացքում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված սոցիալական վճարներից, այլ՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ Արմավիրի ՏՀՏ 09.03.2006 թ-ի թիվ 2302886 ակտով:

Տվյալ դեպքում Կարինե Միսակյանը ունի 83.565 դրամի չկատարված պարտավորություն, որն առաջացել է ՀՀ ԿԱ ՀՊԾ Արմավիրի ՏՀՏ 09.03.2006 թ-ի թիվ 2302886 ակտով առաջադրված 60.000 դրամի սոցիալական ապահովության վճարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով: Ընդ որում, նշված ակտի օրինակը, համաձայն դրա վրա կատարված գրառման, Կարինե Միսակյանը ստացել է 09.03.2006 թ-ին: Բացի այդ, առկա չէ որևէ ապացույն ակտով առաջադրված սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը վճարված լինելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշումը ենթակա է չեղյալ համարման, ինչպես նաև ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ-ին անհրաժեշտ է կայացնել նոր որոշում Կարինե Միսակյանի չկատարված պարտավորությունները գանձելու վերաբերյալ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 908 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ-ին կայացնել որոշում Կարինե Միսակյանի չկատարված պարտավորությունները գանձելու վերաբերյալ:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

